ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 21

ք.Գյումրի «23» ապրիլի 2019թ.

«Գյումրու Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն , որը գործում է իր կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող», ի դեմս գործադիր տնօրեն Ս.Ա.Ղուկասյանի, մի կողմից և «Գյումրու Ուռուցքաբանական դիսպանսեր»ՓԲԸ-ը, որը գործում է իր կանոնադրության հիման վրա,այսուհետ «Պատվիրատու» , ի դեմս տնօրեն Վ.Շիրինյանի, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ կառավարության 27.03.2003թ. թիվ 347-Ն և 15.07.2004թ. թիվ 1089-Ն որոշումները, Կատարողը բժշկական զննության է ենթարկում Պատվիրարատուի աշխատողներին:

1.2 Առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության ենթակա աշխատողների անվանացուցակը Պատվիրատուն ներկայացնում է Կատարողին սույն պայմանագրի կնքման պահին:

1.3 Սույն պայմանագրի 1.2 կետում նշված անվանացուցակում Պատվիրատուն պարտավոր է փոփոխություններ կատարել նոր աշխատողների ընդունման կամ հին աշխատողների ազատման ժամանակ:

1.4 Պատվիրատուի աշխատողների բժշկական զննության պարբերականությունը որոշվում է ՀՀ Կառավարության 27.03.2003 թ. թիվ 347-Ն որոշման թիվ 2 հավելվածի համաձայն:

2. Պայմանագրի գինը և վճարումների կարգը

2.1 Սույն պայմանագրի գինը կազմում է 5500(Հինգ հազար հինգ հարյուր)դրամ, մեկ անձի բժշկական զննության դիմաց /մեկ անգամվա համար/:

2.2 Կողմերի միջև հաշվարկները և վճարումները կատարվում են Կատարողի կողմից էլեկտրոնային եղանակով դուրս գրված և Պատվիրատուի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված հաշիվ-վավերագրերի հիման վրա:

2.3 Պատվիրատուն պարտավոր է իր կողմից ընդունված հաշիվ-վավերագրում նշված գումարը Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցել 30(երեսուն) օրվա ընթացքում:

3.Կողմերի պատասխանատվությունը,պարտավորությունները և իրավունքները

3.1 Պատվիրատուն պատասխանատու է իր կողմից Կատարողին ներկայացված անվանացուցակում նշված անձանց բժշկական զննության ներկայանալու համար:

3.2 Կատարողը պատասխանատու է իր կողմից կատարված բժշկական զննության որակի համար:

3.3 Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված կարգով կատարել վճարումները:

3.4 Կատարողն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել սույն պայմանագրի գործողությունը , եթե Պատվիրատուն մեկ ամսվա ընթացքում չի վճարում իր կողմից ընդունված հաշիվ-վավերագրի գումարը:

3.5 Կատարողը պարտավոր է Պատվիրատուի աշխատողների բժշկական զննությունները իրականացնել սույն պայմանագրով նախատեսված կարգով:

4.Այլ դրույթներ

4.1 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով , երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ:

4.2 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև 31-ը դեկտեմբերի 2019թ.-ը.:

4.3 Կողմերի միջև վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով կամ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4 Սույն պայմանագրում փոփոխություններ կարող են կատարվել կողմերի երկուստեք համաձայնությամբ, գրավոր կերպով:

5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Գյումրու Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա>> ՓԲԸ

Հասցեն-ք.Գյումրի Մազմանյան 3

ՀՎՀՀ- 05500249

Հաշվարկային հաշիվ N 247260002768
Արդշինինվեստբանկի Գյումրու մասնաճյուղում

Հեռախոս 5-36-78

Գործադիր տնօրեն[a]

Ս. Ղուկասյան

/ստորագրություն/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ

Հասցեն ք. Գյումրի, Վ. Սարգսյան 25ա

ՀՎՀՀ 05502356

Հաշվարկային հաշիվ N 163128111476 «Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հեռախոս 3-49-50

Տնօրեն

Վ.Շիրինյան

/ստորագրություն/